կուն, չարքաշ ու արի ժողովուրդ մի են, վրէժ լուծելու յարմար միջոցը չեն կորսնցուներ. իւրաքանչիւրը իւր զէնքը ունի։

Անդափի եղդիք իւրեանց Սիպիքանը կանուանեն, Սիպիքանլի ցեղին հպատակութեան ենթարկուած լինելուն համար, որպէս և Սինեկա եղդիք ևս Հասընի կանուանեն զիրենք։

3. ՔՈԼԻ ԳԵՂ.—Զկանի գիւղէ 1 ժամ արևելեան հարաւ՝ Շեռեանայ աջ ափին վերայ 30 տնուոր մի քրդական գիւղ է, ունի ընդարձակ արտօրայք և անհաշիւ մարգագետիններ, կը բուծանեն ոչխար և կովիւղը լաւ և առատ է, սորա համար ասուած է «դացի Քոլի գեղ. բերի տիկ մի եղ» առածն, որ ըստ տեղւոյն պիտի տեսնէք [1]։

4. ՋՕՐԱՌԱՅ (ուժեղ ջուր).—Գիւղս $^1/_4$ ժամ Քօլէի հարաւն 5 տուն դաղթական թուրք բնակիչ ունի։

5. ԳՈՄՔ.—Քօլէ գիւղի $^1/_2$ ժամ արևելքն՝ Ղազի և Զալէ գիւղի միջավայրը, Շեռեանայ աջ ափին վերայ մի թուրք դաղթականաց գիւղ է, որ Արիֆ բէկ անուն Կարսեցի թուրք մի շէնցուցած է 17 տնուորով։

Այս գիւղն ընդարձակ արօտավայր ունի, որ մինչև Անդափ 2 ժամ բարձրութեան վերայ մեծ տարածութիւն մի բռնած է։

Սոքա աշխատասէր ժողովուրդ լինելով՝ ձեռք զարկած են երկրագործութեան, հարիւրաւոր տարի չը մշակուած վայրեր վարած ու ցանած են։

---

1. Առածներն եւ Զուրուկայ տէր Յովհաննէսի առակներէն մի քանի կտոր ամփոփած եմ տեղագրութեանս երկրորդ մասին մէջ։